



ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ
ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ (LSFINANCE)
ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ**

2020թ.

Նկարագրություն

Գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային (LSFINANCE) համակարգը (այսուհետ՝ Համակարգ) ներառում է ՀՀ պետական բյուջեի, ՀՀ համայնքների բյուջեների, արտաբյուջետային (դեպոզիտային), վարկային/դրամաշնորհային և ՊՈԱԿ-ների միջոցների բոլոր ելքերը, մուտքերը, վերաձևակերպումները և վերադարձները: Հաշվետվությունները ձևավորվում են համակարգում առկա գործարքների հիման վրա:

Համակարգը հնարավորություն է տալիս հաշվետվություններ ստանալ ցանկացած օրվա դրությամբ, (բացառությամբ ընթացիկ օրվա, կամ ընթացիկ օրվա դրությամբ հաշվետվությունը ձևավորել գանձապետական գործառնական օրվա ավարտից հետո, հնարավոր շեղումներից խուսափելու նպատակով):

Հաշվետվությունների վրա կիրառվող բազմաթիվ ֆիլտրերը՝ ամսաթիվ, հաշվեկշռային հաշիվներ, գերատեսչություններ, բյուջետային դասակարգումներ, գործընկերոջ հաշիվներ, հարկ վճարողի հաշվառման համարանիշ և այլն, հնարավորություն են տալիս ստանալ մանրամասն տեղեկատվություն:

Հաշվեքննիչ պալատի կողմից առավել հաճախ օգտագործվող հաշվետվությունների ցանկ

Հաշվետվության անվանում	Հաշվետվության բաժին	Հաշվետվության հերթական համար
Բյուջետային ծախսերի կատարման մասին	Հաշվետվություններ Quick Report	A-2257
Հաշիվների ցանկ և շրջանառություն	Հաշվետվություններ Quick Report	A-0504
Հաշիվների ելքերի և մուտքերի վերաբերյալ	Հաշվետվություններ Formula one	C-1218
Պայմանագրերի ցուցակ	Հաշվետվություններ Formula one	C-2000
Եկամուտների մասին	Հաշվետվություններ Quick Report	A-2261

Համայնքի բյուջեի կատարման մասին	Հաշվետվություններ Formula one	C-5235
Երևանի քաղաքապետարանի բյուջեի կատարման մասին	Հաշվետվություններ Formula one	C-6236

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քայլ 1

Մուտք գործել Համակարգ ներմուծելով օգտվողի անունը և ծածկագիրը:

Քայլ 2

Համակարգի գլխավոր պատուհանի վերևի տողից ակտիվացնել «Տեղեկատու» պատուհանը, որի ստորին հատվածում տեղակայված է հաշվետվությունների երկու բաժինները (հաշվետվություններ Quick Report և հաշվետվություններ Formula one):

Քայլ 3

Ըստ ներկայացված ցանկի ընտրել հաշվետվության բաժինը, ցանկից ընտրել հաշվետվության հերթական համարը:

Քայլ 4

Ընտրված հաշվետվության ակտիվացնելուց հետո լրացնել բացված պատուհանի աջ մասում պահանջվող տվյալները.

Հաշվետվություն A-2257

Հաշվետվությունը հնարավորություն է տալիս ցանկացած օրվա դրությամբ ստանալ պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես հաստատված պլան, ճշտված պլան և ֆինանսավորում:

Հաշվետվություն հնարավոր է արտահանել ըստ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման առանձին ծրագրերի և միջոցառումների, գերատեսչական դասակարգման առանձին մարմինների, գործառական և տնտեսագիտական դասակարգման առանձին տարրերի: Դասակարգման ընտրությունը և դասավորվածության հերթականությունը կատարվում է հաշվետվության աջ մասում տեղակայված «Դաշտեր» պատուհանի LDAGSCPMKR

տառերի ընտրության և դասավորվածության միջոցով: Ստորև ներկայացված է տառերի համապատասխան բացատրությունները:

L - Պատասխանատու գերատեսչություն

D - ԾԲ ծրագիր

A - Միջոցառում

G - Բաժին

S - Խումբ

C - Դաս

P - Ծրագիր

M - Ծրագրերը իրականացնող գերատեսչություն

K - Հաշվեհամար

R - Հոդված

Օրինակ. Տնտեսագիտական դասակարգմամբ, որևէ գերատեսչության հաշվետվություն ստանալու համար անհրաժեշտ է ջնջել բոլոր տառերը, թողնելով միայն MR տառը:

Պարտադիր լրացման դաշտեր.

- Նշել անհրաժեշտ ժամանակահատվածը (տարեսկիզբ նշել հունվարի 2-ից)
- «Պլան» դաշտում նշել Y տառը տարեկան կամ Q տառը եռամսյակային հաշվետվություն ստանալու համար:

Հաշվետվությունը ստանալու համար սեղմել ընթացիկ պատուհանի վերևի հատվածում տեղակայված «Print preview» կոճակը, այնուհետև «Save» կոճակի միջոցով հիշել հաշվետվությունը:

Հաշվետվություն A-0504

Հաշվետվության միջոցով հնարավոր է ստանալ տարբեր հաշվեկշռային հաշիվների ցանկերը, ինչպես նաև նշված ժամանակահատվածի համար հաշիվների սկզբնական մնացորդները, դեբետ, կրեդիտ շրջանառությունները և վերջնական մնացորդը:

Պարտադիր լրացման դաշտեր.

- Հաշվեկշռային հաշիվ
- Ժամանակահատված
- «Հաշիվներ» դաշտում ընտրել անհրաժեշտ հաշիվները (Նշված

Ժամանակահատվածում ոչ գրոյական շրջանառություն, գրոյական շրջանառություն, բացված, փակված և այլն)

- Նախարարություն

Հաշվետվությունը ստանալու համար սեղմել ընթացիկ պատուհանի վերևի հատվածում տեղակայված «Print preview» կոճակը, այնուհետև «Save» կոճակի միջոցով հիշել հաշվետվությունը:

Հաշվետվություն C-1218

Հաշվետվությունը հնարավորություն է տալիս ըստ առանձին հաշիվների ստանալ նշված ժամանակահատվածի համար սկզբնական մնացորդը, հաշվի ելքերը և մուտքերը ըստ օրերի, վերջնական մնացորդը, գործընկերոջ հաշիվը, հաշվի անվանումը, ՀՎՀՀ-ն, գործարքի նպատակը, ծախսային հաշիվների դեպքում նաև տնտեսագիտական հոդվածը:

Պարտադիր լրացման դաշտեր.

- Ժամանակահատված
- Հաշվեհամար (ընտրել A-0504 հաշվետվությամբ ստացված հաշիվների ցանկից)

Հաշվետվությունը ստանալու համար սեղմել լրացման դաշտերի վերևի տողում տեղակայված «ts1» կոճակը, այնուհետև Համակարգի հիմնական պատուհանի վերևի տողում տեղակայված «Արտահանել» կոճակը և հիշել հաշվետվությունը:

Հաշվետվություն C-2000

Հաշվետվությունը հնարավորություն է տալիս ստանալ կնքված պայմանագրերի ցանկը (վճարողի հաշիվ, բաժին, խումբ, դաս, ծրագիր, հոդված, հոդվածի անվանում, նախարարություն, պայմանագրի՝ համար, հիմնական համար, կոդ, սկիզբ, ավարտ, գումար, կանխավճարի չափ, վճարված գումար, մնացորդ, գնման ձև, գործընկերոջ՝ հաշվեհամար, անվանում, ՀՎՀՀ):

Պարտադիր լրացման դաշտեր.

- Ամսաթիվ
- Գումարը (սկսած-մինչև)
- Հաշվեկշռային հաշիվ

- Նախարարության կողմ
- Մյուս դաշտերը լրացնել ըստ անհրաժեշտության (օրինակ. Եթե անհրաժեշտ է ստանալ որևէ տնտեսագիտական հոդվածով իրականացվող ծախսերի շրջանակում կնքված պայմանագրերի ցանկը, ապա «Հոդված» դաշտում անհրաժեշտ է նշել տվյալ հոդվածի կողմը)

Հաշվետվությունը ստանալու համար սեղմել լրացման դաշտերի վերևի տողում տեղակայված «ts1» կոճակը, այնուհետև Համակարգի հիմնական պատուհանի վերևի տողում տեղակայված «Արտահանել» կոճակը և հիշել հաշվետվությունը:

Հաշվետվություն A-2261

Հաշվետվությունը հնարավորություն է տալիս ցանկացած օրվա դրությամբ ստանալ պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես հատատված պլան, ճշտված պլան և փաստ:

Հաշվետվությունը հնարավոր է արտահանել ըստ բյուջետային եկամուտների դասակարգման առանձին խմբերի, ենթախմբերի և գերատեսչական դասակարգման առանձին մարմինների: Դասակարգման ընտրությունը և դասավորվածության հերթականությունը կատարվում է հաշվետվության աջ մասում տեղակայված «Դաշտեր» պատուհանի GSMKH տառերի ընտրության և դասավորվածության միջոցով: Ստորև ներկայացված է տառերի համապատասխան բացատրությունները.

G – խումբ

S – ենթախումբ

M – Գերատեսչություն

K – Եկամտային հաշիվ

H - ՀՎՀՀ

Պարտադիր լրացման դաշտեր.

- Ժամանակահատված

Հաշվետվությունը ստանալու համար սեղմել ընթացիկ պատուհանի վերևի հատվածում տեղակայված «Print preview» կոճակը, այնուհետև «Save» կոճակի

միջոցով հիշել հաշվետվությունը:

Հաշվետվություն C-5235, C-6236

Հաշվետվությունը հնարավորություն է տալիս ցանկացած օրվա դրությամբ ստանալ համայնքների բյուջեների եկամուտների կատարման վերաբերյալ, ծախսերի (գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ) կատարման վերաբերյալ և հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ տեղեկատվություն:

Պարտադիր լրացման դաշտեր.

- Ժամանակահատված
- Համայնքի կոդ

Հաշվետվությունը ստանալու համար սեղմել լրացման դաշտերի վերևի տողում տեղակայված «ts1» կոճակը, այնուհետև Համակարգի հիմնական պատուհանի վերևի տողում տեղակայված «Արտահանել» կոճակը և հիշել հաշվետվությունը: